

ներով կը նշմարուին Ապու Սաճ արար
հրամանատարին մարդոցմէն: Ալ-Աֆշին
զգալով որ Բարակ պարտութեան պարա-
զային փախչելու միակ ճամբայ մը ունի
Սիւնիքի վրայով, հրամայած էր բոլոր
ճամբաներուն վրայ հսկել: Ապու Սաճի
ոյժերը կը յարձակին հանդէլու համար
պահ մը կանգ առած Բարակի եւ հետե-
ւորդներուն վրայ, կը կալանաւորեն Բա-
րակի եղբայրը՝ Մուսալիան, մայրը եւ Կի-
նը: Բարակ իր Ապու Ալլահ եղբոր հետ,
եւ հաւանարար քանի մը ուրիշ հետեւորդ-
ներով, կը յաջողին փախչիլ եւ Սիւնեաց
աշխարհի լեռները ապաստանիլ եւ կը ջա-
նան գաղտնի ճամբաներով յառաջանալ:
Հաւանարար ինք ու եղբայրը անջատ՝ թէ-
եւ իրարու մօտ՝ կը ճամբորդէին: Ուտեա-
տի պակասը կը ստիպէ որ Բարակ հայ ա-
րօտավայրեր զլոթէ՝ հաց գնելու համար:
Սակայն հայ հողագործները կը կասկածին
եւ լուր կու տան իրենց Սահլ Իպն Մնրատ
իշխանին: Սահլ կու գայ եւ արդէն իրեն
նախապէս ծանօթ Բարակը կը ճանչնայ:

Երբ Բարակ կրցաւ ճողպորիլ Ապու Սա-
ճէն, կ'երեւի թէ ալ-Աֆշին լուր դրկեց
Սիւնեաց հայ իշխաններուն, որ հսկեն ի-
րենց սահմաններուն վրայ, ու ձերբակա-
լեն Բարակը: Խիստ հետաքրքրական է Տա-
րարի տուած մանրամասնութիւնները
Բարակի հայ Սահլ Իպն Մնրատէ ձերբա-
կալուելու մասին: Պատմիչ Մասուտի սա-
կայն կը տարբերի իր տուած մանրամաս-
նութեանց մէջ: Ան կը յիշէ հերկողի տեղ՝
հողի մը, եւ չի յիշեր ո՛չ հերկողին եւ ո՛չ
ալ Բարակին հետ սեւէ ընկերացող: Իսկ
պատմիչ Իպն Կեդիր կ'աւելցնէ, որ Սահլ
Իպն Մնրատ՝ Սալիֆային տեղակալներէն
պաշտպանութիւն խնդրած էր Բարակի
դէմ:

Սահլ Իպն Մնրատ համոզել կը ջանայ
Բարակը, որ իր բերդը գայ: Ասիկա շա-
հեկան է: Ուրեմն Բարակ մինակ զերի մը
եւ առ առաւելն միայն իր եղբոր հետ չէր
որ այդ կողմերը հասած էր: Անանուն ա-
րար պատմիչի մը մէկ հատուածը, որու

համաձայն՝ հողագործ հայուն ընկերը հայ
պահակներուն կը տեղեկացնէ իր տեսա-
ծը, կը վկայէ որ պահուած ՄԱՐԳԻԿ կա-
յին որոնք ճամբաները բռնած էին:

Սահլ Իպն Մնրատ, որու մասին մանրա-
մասն իր կարգին, ազգական էր Աբլ-Ասա-
զին, որ իր կարգին զինակից էր Բարա-
կին՝ Բազաց եւ Գեղարքունեաց աւերման
եւ ջարդին ժամանակ: Բարակ որ դեռ կը
կասկածէր ըստ երեւոյթի Սահլ Իպն Սըն-
բատէն, տեղի կու տայ. սակայն պայման
կը դնէ որ իր եղբայրը՝ Ապու Ալլահը՝ ա-
պաստանի Իպն Իստիֆանուսի բերդը, իսկ
ինքը կը մնայ Սահլ Իպն Մնրատի քով:
Այս Իպն Իստիֆանուսը ամուսնացեր էր
Աբլ-Ասազի ազնական եւ յաջորդն էր: Բա-
րակ ուզեց այս բաժանումը՝ որպէսզի երբ
ինք բռնուի, այն ատեն իր եղբայրը շա-
րունակէ իր տունը, եւ կամ հակառակը:

Որոշ է որ Բարակ՝ Սահլ Իպն Մնրատէ
կը կասկածէր: Ասոր պատճառը կարելի է
գտնել Մակդիսի արար պատմիչին քով,
որ խօսելով այս դէպքերուն մասին կը վը-
կայէ որ Սահլ կալանաւորուած էր Բարա-
կէն եւ վերջինս պղծած էր իր (Սահլի)
մայրը, բոյրը եւ կիներ՝ Սահլի ներկայու-
թեան: Ուրեմն Բարակ իր այդ յուսահատ
փիճակին մէջ իսկ տարակոյսով պիտի ըն-
դունէր Սահլի հիւրընկալութիւնը: Իսկ
Սահլ իր կարգին կ'երեւի դեռ կը վախնար
Բարակին ձեռք տալէ, գուցէ անոր հետ
գտնուած հետեւորդներուն պատճառաւ,
կամ գուցէ Սիւնիքի մէջ Բարակի կողմնա-
կիցներէն:

Վերջապէս Բարակ կը մեկնի Սահլի
բերդը: Բարակի եղբայրը՝ Ապու Ալլահ
յաջորդ օր, այսինքն օր մը Սահլի քով
հիւր մնալէ վերջ, կը մեկնի Իպն Իստիֆա-
նուսի բերդը, հսն ձմեռելու համար: Սահլ
անմիջապէս լուր տուաւ արար ընդհանուր
հրամանատար ալ-Աֆշինի, որ Բարակ իր
բերդը կը գտնուի: Տարարի էր տարբերի
Մասուտի պատմիչը, որ կ'ըսէ թէ Սահլ
Իպն Մնրատ ճաշկերոյթ մը տուաւ Բարա-
կին, բայց վերջինս ընդվզեցաւ Սահլի իր